«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ի՞նչպես սովորողների մոտ զարգացնել պատմական ակտիվ մտածողություն և ինքնուրույնություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Հովհաննիսյան
(Շիրակի մարզի «Իսահակյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ)

Շիրակ 2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն..... 2-3
2. Գլուխ 1- Ի՞նչ է ակտիվ մտածողությունը և ինքնուրույնությունը..... 4-9
3. Գլուխ 2- Ինչպե՞ս նպաստել պատմական մտածողության և ինքնուրույնության ձևավորմանը տարբեր մեթոդների միջոցով.....10-15
4. Եզրակացություն..... 16
5. Օգտագործված գրականության ցանկ..... 17

Ներածություն

Այժմ ուսումնական հաստատություններում ուսուցման ռազմավարությունը փոխարինվում է զարգացման ռազմավարությամբ: Այսօր պետք է ձգտել ուսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարել աշակերտակենտրոն ուսուցմանը: Ամբողջ կյանքի ընթացքում ինքնազարգացման ռազմավարությունը հնարավոր կլինի, եթե դեռ աշակերտական տարիներին ապագա մասնագետը տիրապետի ուսումնահետազոտական գործունեությանը: Դրա համար ուսուցման պրոցեսը պետք է հետաքրքիր լինի, ուստի բավարար չէ միայն բովանդակության մատչելի ներկայացումը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ

- Երբ մենք ինչ-որ բան տեսնում կամ լսում ենք հիշում ենք 50%-ը
- Երբ ինչ-որ բան ինքնուրույն ենք անում, հիշում ենք 90%-ը

21-րդ դարում սովորողը պահանջում է վերանայել ուսուցման ողջ բովանդակությունը, այսինքն՝ ճանաչել յուրաքանչյուր երեխայի անձի ստեղծագործ բնույթը: Ներկայումս առաջնահերթ խնդիր է դարձել սովորողների մոտ ակտիվ մտածողության զարգացումը. սովորողը դեպքերի, իրադարձությունների ժամանակագրությունը կամ անունների շղթան իմանալուց զատ պետք է իմանա պատճառահետևանքային կապը՝ գտնելով հետևյալ հարցերի պատասխանը՝ ինչու՞, ինչպե՞ս, ի՞նչ վկայություններ կան այդ իրադարձության վերաբերյալ կամ արդյո՞ք աղբյուրները չեն հակասում մեկը մյուսին և այլն: Այսինքն սա օգնում է սովորողներին անցյալի մասին գիտելիք և ընկալում ձևավորել , ինչպես նաև ինքնուրույն հասկանալ, թե ինչ գիտեն իրենք այդ անցյալի մասին:

Մտածողության զարգացումը օգնում է աշակերտներին աշխատել աղբյուրների հետ, կապել տարբեր աղբյուրներից վերցված տեղեկատվությունը իրենց ունեցած պատմական գիտելիքների հետ, իսկ ինքնուրույնության ձևավորումը նպաստում է ինքնագնահատականի և ինքնավստահության բարձրացմանը, որի արդյունքում մենք ունենում ենք պրպտող, հետազոտող, վերլուծող և եզրակացություն անող աշակերտ:

Հանրակրթական նոր չափորոշիչը մեծ տեղ է հատկացրել մտածողության զարգացման հմտություններին և ինքնուրույնության ձևավորմանը: Շատ է խոսվում այն մասին, որ կրթական համակարգում քննադատական մտածողությունը չի զարգացվում, այլ շեշտը դրվում է մեխանիկական վերարտադրության վրա, կամ սովորողը բավարարվում է պատրաստի նյութը միայն հիշելով : Այդ պատճառով պետք է փորձենք ավելի ուժեղացնել մտածողություն բաղադրիչը. ցանկացած մեծ թեմա պետք է կապել իրական կյանքի հետ, որպեսզի սովորողը հասկանա, թե

ինչու է այդ թեման սովորում, ինչպես է այն օգտագործելու, ոչ միայն կարդա ու վերարտադրի դասագիրքը, այլև ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարի:
Ներկա ժամանակաշրջանում բոլոր սովորողները խնդիր ունեն բառապաշարի սակավության, ինքնուրույն և ակտիվ մտածողության բացակայության և, ի վերջո, անտարբերության: Դրա համար մենք պետք է տարբեր ռազմավարություններով փորձենք լրացնել այդ մեծ բացերը: Պետք է հնարավորինս ներքաշել նրանց ուսումնական պրոցեսի մեջ, որպեսզի նրանց մոտ հետաքրքրություն առաջանա հետազոտելու ուսումնասիրվող նյութը և նրանք փորձեն ինքնուրույն հասնել մի կետի: Տարիքի մեծացման հետ զուգընթաց սովորողների մոտ ինքնուրույնությունը և ակտիվ մտածողությունը սկսում է քիչ-քիչ զարգանալ, իսկ մեր խնդիրն է դասապրոցեսի ընթացքում կատարվելիք աշխատանքների միջոցով այն հասցնել առավելագույնի:

Գլուխ 1. Ի՞նչ է պատմական ակտիվ մտածողությունը և ինքնուրույնությունը

«Պատմություն» բառը ներառում է երեք ժամանակաշրջան՝

1. Անցյալ
2. Ներկա
3. Եվ այս երկուսի հիման վրա ստեղծվելիք ապագա

Մեր խնդիրն է խթանել սովորողներին, որպեսզի նրանք՝

- ❖ պատկերացնեն այդ երեք ժամանակաշրջանները
- ❖ կապեն դրանք իրար հետ
- ❖ վերլուծեն դրանցում եղած դեպքերն ու իրադարձությունները
- ❖ վերհանեն պատճառահետևանքային կապերը
- ❖ հանգեն եզրակացության

Այս ամենին սովորողները կարող են հասնել միայն այն դեպքում, երբ նրանց մոտ ձևավորվի մտածողության հմտությունը, ինքնուրույնության ձգտումը: Պատմությունը դա մեր կենսագրությունն է. եթե անգամ սովորողները փայլուն իմանան դեպքերի ու իրադարձությունների ժամանակաշրջանները կամ նշանավոր անձանց, դա, միևնույն է, բավարար չէ այդ կենսագրությունը լիովին ներկայացնելու, հասկանալու համար: Դրա համար պետք է հիմնովին ուսումնասիրել ամեն մի դետալ. այսինքն չբավարարվել միայն իրադարձությունները լուսաբանելով, այլ ավելի շատ կենտրոնանալ ինչու են դրանք տեղի ունեցել, ժամանակի հրամայական են եղել թե անհրաժեշտություն, կամ ինչ հետք են թողել սերունդների վրա և այլն: Այս հարցերի շղթան կարելի է անվերջ շարունակել, դրա համար էլ պետք է սովորողներին մոտիվացնել, որպեսզի կատարեն ուսումնասիրություններ, հետազոտություններ, որոնց միջոցով կստանան շատ հարցերի պատասխաններ:

Պատմություն առարկայի դասավանդման գլխավոր նպատակը ազգային գիտակցությամբ օժտված, համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից անհատի, հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ, որոնք միտում ունեն զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը,

հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողությունները և հմտությունները :



Այս գծագիրը մոդելավորում է պատմության ուսումնառության առանցքային տարրերը: Ուսուցչի խնդիրն է կիրառել այնպիսի ռազմավարություններ, որոնք հնարավորություն են տալիս

• **Խթանել** սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքները ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

• **Սովորեցնել** տեղեկատվական աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, այսինքն գիտելիք կառուցելու կարողություններ :

• **Ձևավորել** պատմական իրադարձությունները, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ :

• **Զարգացնել** ուսումնառության ընթացքում սովորողների գիտելիքները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու, անցյալի, ներկայի հասարակական –քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողությունները և հմտությունները :

Սովորաբար ուշադրության կենտրոնում են հայտնվում այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են մարդուն գործնական կյանքում, քանի որ դրանց առանձնահատկությունը գործնական կիրառելիությունն է : Ուսուցման պրակտիկ ուղղվածությունը կարևորվում է ոչ միայն ստացած գիտելիքների մնայունության ապահովման և կենսական տարբեր իրադրություններում նրանց կիրառման տրամաբանությամբ, այլև սովորողների մեջ կայուն ուսումնական մոտիվացիա ձևավորելու անհրաժեշտությամբ: Աշխարհի հանդեպ երեխաների բնատուր հետաքրքրությունը ուսումնառության հզոր դրդապատճառ է, իսկ կյանքից կտրված տեսական գիտելիքը փոխանցելը երեխաներին ինքնուրույն մտածելու հնարավորությունից զրկում է : Ամենից նպատակահարմարն

այն է, որպեսզի գիտելիքները կապելով փորձի, կյանքի հետ, դրանք առավել հետաքրքիր դարձնել: Նման պարագայում սովորողը հասկանում է իր ձեռք բերած գիտելիքների կենսական նշանակությունն ու իմաստը, ասել է թե՝ ապահովվում է գիտելիքների իմաստավորված յուրացում: Իմաստալից, անձնային նշանակություն ստացած գիտելիքը խթանող հզոր գործոն է և կարող է սովորողների ապագա մասնագիտական կողմնորոշման մեջ արդեն լուրջ դերակատարում ունենալ:

Արդի աշխարհում օրըստօրե խորացող համաշխարհայնացման պայմաններում, երբ ազգային ավանդույթներն իրենց դաստիարակիչ և ուղղորդող գործառույթները կորցնում են, մարդու ինքնուրույնությունը, որպես անձնային որակ, առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում: Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության ընթացքում՝ առավելագույնս դրսևորվել թիմային աշխատանքում , հետազոտություն կատարելիս , դերային խաղերի կազմակերպման ընթացքում : Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս , երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի :Երեխաների ինքնագիտակցությունը զարգանում ու զորանում է մարդկանց հետ շփումների արդյունքում: Եթե այդ շփումները պարտադրված բնույթ են ստանում, սովորողը կորցնում է իր կարևորության գիտակցությունը, նա իրեն տեսնում է միայն կատարողի դերում: Սահմանափակելով նրա ինքնուրույնության ու ինքնատիպության դրսևորումները՝ դպրոցը չի թողնում երեխային գիտակցել ինքն իրեն, զգալ իր ներքին հնարավորություններն ու լավագույնս դրսևորել դրանք: Եթե նա քիչ թե շատ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր որոնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետաքրքրություն: Չկա հետաքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի

վերածելը : Ինքնուսուցումը իմացական գործունեության բարձրագույն մակարդակն է , երբ անձը պատրաստ է ինչ –որ չափով դուրս գալ ուսումնական պահանջների սահմաններից, անցնել ազատ իմացական գործունեության: Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մանրակրկիտ հետազոտական գործընթացի վերածելով: Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում, այսինքն սա ուղիղ համեմատական է ակտիվ մտածողական գործունեության: Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի՝ մենք դրանով պայմաններ կստեղծենք այսպես կոչված ստեղծագործ (կրեատիվ) անձի ձևավորման համար: Ի վերջո՝ սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Ակտիվ մտածողական աշխատանքները հնարավորություն են տալիս

- **Ուսուցումը հարմարեցնել** աշակերտների անհատական առանձնահատկություններին և հետաքրքրություններին
- **Ապահովել** բազմակողմանի նպատակների միաժամանակ իրականացում
- **Ապահովել** գիտելիքների բարձր մակարդակ
- **Նպաստել** սովորողների անձի զարգացմանն ու անհատականության ձևավորմանը, նրանց դարձնելու ակտիվ անհատ:

Ակտիվ մտածողական և ինքնուրույն աշխատանքների շնորհիվ սովորողները սովորում են թեմային համապատասխան նոր գաղափարներ: Նրանց կատարած աշխատանքները կարող են արտահայտվել հետևյալ կերպ՝

- Երևակայական նկարների կազմում(կարող է լինել նաև ծաղրանկար)
- Թեմայի խորությամբ հետազոտում(դիագրամների կազմում, գծագրեր և այլն)
- Արվեստի հետ հաղորդակցություն(երաժշտություն լսել, թատրոն այցելել և այլն)
- Տեսանյութեր դիտել(ֆիլմեր, փաստավավերագրական նյութեր)

Վերլուծական աշխատանքների շնորհիվ սովորողները իրար հաղորդում են տարբեր տեղեկություններ, մտքեր և տպավորություններ են փոխանակում, ապրումակցում են միմյանց, կիսում են մտահոգությունները: Նրանց պետք է հստակ գիտակցեն, թե որն է իրենց կատարած աշխատանքի նպատակը, որը կարող է լինել

տեղեկության հաղորդում *հերքում*

տեսակետի արտահայտում *տպավորություն, հուզմունքի արտահայտում*

համոզում *տեղեկության վերլուծում և գնահատում*

Սովորողների մտածողության ձևավորման գործում շատ կարևոր է, որ դասասենյակը լինի տրամադրող, ուր աշակերտը կարող է հարցեր տալ և պատասխանել դրանց, տեղեկություններ և գաղափարներ փոխանակվեն միմյանց հետ, որպեսզի նրանց հնարավորություն տրվի հավաքել տեղեկություններ, նոր գիտելիքը կառուցել այդ տեղեկատվության վրա:

Կանադացի պատմության կրթական հետազոտող **Ստեֆան Լևեսկը** սահմանում է պատմական գիտելիքների բովանդակության երկու տեսակետ. մենք ունենք բովանդակային կողմը, որը վերաբերում է պատմական փաստերի իմացությանը, օրինակ՝ Առաջին համաշխարհային պատերազմը տեղի է ունեցել 1914-1918 թթ.: Մյուս տեսակետը ստանդարտն է , և այս տեսակետը վերաբերում է նրան, թե ինչպես են կառուցվել պատմական գիտելիքները:

Պատմական մտածողության գաղափարը ավելի հստակեցրել են կանադացի հայտնի հետազոտողներ **Փիթեր Սեյքսասը** և **Թոմ Մորթոնը**, ովքեր գրում են, որ պատմական մտածողության մոդելը բխում է պատմաբանների աշխատանքից: Դա պայմանավորված է նրանից, թե ինչպես են նրանք հաղթահարում անցյալը հասկանալու դժվարին խնդիրները: Նրանք բացատրում են, որ պատմական մտածողությունը ստեղծագործական գործընթաց է, որով անցնում են պատմաբանները՝ մեկնաբանելու անցյալի իրադարձությունները: Սեյքսասը և Մորթոնը այս մանկավարժական մոտեցումը արմատավորում են «Մեծ վեցյակի» սկզբունքներում և բացատրում, թե ինչպես կարելի է յուրաքանչյուր հայեցակարգ կիրառել դասարանում:

Պատմական նշանակություն. այն ի հայտ է գալիս, երբ մենք կապում ենք մեր կյանքում առկա մեծ, ազդեցիկ մտահոգությունների տարրերը, ինչպիսիք են շրջակա միջավայրի կայունությունը, արդարությունը և բարեկեցությունը: Այն շատ լավ խթան է պատմական մտածելակերպ զարգացնելու համար:

Ապացույցներ. Սա քննարկում է, թե ինչպես է պատմություն գրելու գործընթացը հիմնվում առաջնային աղբյուրների վրա, թե ինչպես են աղբյուրները դառնում ապացույցներ, և ինչպես ենք մենք վերլուծում և հաշվի առնում համատեքստը, որպեսզի օգնենք սովորողներին ստեղծել և հասկանալ պատմությունը բազմաթիվ մակարդակներում(դիագրամներ, պատմական լուսանկարներ)**:**

Շարունակականություն և փոփոխություն. Եթե պատմության ընթացքում փոփոխություններ չլինեին, ապա պատմության վերաբերյալ ասելիք գրեթե չէր լինի: Սա խրախուսում է սովորողներին ընդունել փոփոխությունների հիմքում ընկած հսկայական և

բազմակի շարունակականությունները, որոնք նպաստում են մարդկային փորձին:

Պատճառ և հետևանք. Այս հայեցակարգը առաջարկում է ոչ միայն դիտարկել պատմության գործոնները(պատմության պատճառները), այլ նաև պատճառահետևանքային գործոնների փոխազդեցությունը՝ սկսած գերիշխող սոցիալական, քաղաքական, մշակութային և տնտեսական պայմանների ազդեցությունից: Պատմություն սովորելու անբաժան մասն է կազմում պատճառահետևանքային կապերի բացահայտումը, որոնց սովորողը պետք է տիրապետի:

Պատմական հեռանկար. Այս հայեցակարգը սովորողներին ներգրավվում է պատմական հեռանկարների մեջ՝ օգտագործելով հիմնական աղբյուրները, որպեսզի փորձեն տեսնել այն մարդկանց աչքերով, ովքեր ապրել են մեր այսօրվա կյանքից հեռու ժամանակներում: Սովորողները կարող են ապացույցների վրա հիմնված եզրակացություններ անել պատմության հերոսների մտքերի և զգացմունքների մասին, այլ ոչ թե դատել նրան այսօրվա տեսանկյունից:

Էթիկական հարթություն. հաճախ սովորողները դաժան են դատում անցյալը, քանի որ նրանք դատում են ըստ ժամանակակից չափանիշների և սովորությունների: Խրախուսելով նրանց դիտել անցյալի իրադարձությունները պատմական համատեքստում, մենք կարող ենք օգնել նրանց սովորել արդար դատել անցյալը: Սեյքսասն ու Մորթոնը դա անելու ուղիներից մեկը համարում են պատմությունների ընթերցումն ու քննարկումը:

Գլուխ 2.

Ինչպե՞ս նպաստել պատմական մտածողության և ինքնուրույնության ձևավորմանը տարբեր մեթոդների միջոցով:

Սովորողների մոտ պատմական մտածողության ձևավորումը բավականին դժվարին գործընթաց է, որի համար պահանջվում են բավականին մեծ ջանքեր: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի սովորողները նախ և առաջ հետաքրքրություն ցուցաբերեն ներկայացվող թեմայի նկատմամբ, ինչի համար էլ կան բազմաթիվ ռազմավարություններ՝ ուղղված սովորողների մոտ ակտիվ մտածողություն ձևավորելուն: Դրա համար շատ կարևոր է նաև համագործակցային աշխատանքը՝ ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, ինչը լրացնում է այս ամենին՝



այս ամենը նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ունակությունների բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը: Այս առումով մեթոդները բաժանվում են ակտիվ և պասիվ տեսակների՝ պայմանավորված սովորողների՝ ուսումնական գործընթացին մասնակցելու աստիճանով: Պասիվ են այն մեթոդները, որոնց կիրառման ընթացքում սովորողները միայն լսում կամ լսում են(էքսկուրսիա, դիտում, ունկնդրում, ցուցադրում): Ակտիվ են սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպող և խրախուսող մեթոդները(լաբորատոր աշխատանքներ, գրքերով աշխատանք և այլն):

Պատմությունը մեր հավաքական հիշողությունն է, որում ամփոփված է մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության խորհուրդը: Այն հնարավորություն է տալիս ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն: Պատմության իմացությունը հնարավորություն է տալիս ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնելու պետությանը, պատկերացում կազմելու համաշխարհային պատմության մեջ Հայաստանի ու հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին:

Սովորողների նքնուրույնության ձևավորմանը նպաստող գործոններից է քննադատական մտածողության ուսուցումը, որը սկսվում է տեղեկատվության իմացությամբ և ավարտվում է որոշման կայացմամբ: Քննադատական մտածողություն առաջանում է, երբ չկա մեկ ճշմարիտ պատասխան: Դրան բնորոշ է.

- ինքնուրույն և հստակ կարծիք կազմելը
- հակասական խնդիրներ լուծելը
- երկու և ավելի հավանական գաղափարներից առավել նպատակահարմարն ընտրելը
- գաղափարների շուրջը բանավեճերին պատասխանատվությամբ վերաբերվելը
- ճանաչողությունը
- տեսակետն ազատորեն արտահայտելը

Այսօրինակ ուսուցման ձևերը շատ առավելություններ ունեն, օրինակ զարգացնում են սովորողների տրամաբանական մտածողությունը, ստացած գիտելիքը համոզմունքի են վերածում, աշխարհայացք են ձևավորում, երևակայական մտածողությունն է զարգացնում, ինչու չէ սովորողների ինտուիցիան, հնարավորություն է տալիս օգտվելու միջառարկայական կապերից: Այսինքն հետազոտական աշխատանքներ կատարելիս սովորողները, այսպես ասած, «հայտնագործում են» արդեն վաղուց հայտնագործածը, ստուգելով ճշգրտությունը՝ կարողանում են ճիշտ օգտվել տեղեկատվությունից:

Պատմական մտածողություն զարգացնելու լավագույն մեթոդներից է սկզբնաղբյուրներով աշխատելը: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ոչ միայն տեղեկանալ հակասություններին ու տարակարծիքներին, այլ մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում կազմել հարցի շուրջ: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն սովորողների վերլուծական կարողությունների զարգացման գործում: Այս ուղղությամբ 11-րդ դասարանում հետևյալ աշխատանքն ենք կատարել: Սովորողներին տրամադրեցի հետևյալ սկզբնաղբյուրը և դրան համապատասխան հարցեր, որոնց ճիշտ պատասխանելու դեպքում նրանք կվաստակեին միավորներ՝

«Երբ գնացի …… կոնգրես՝ մեր ժողովրդի իրավունքները բարձրաձայնելու համայն աշխարհով, միայն այդժամ հասկացա, որ նախ և առաջ պետք է ունենալ իրավունք ունենալու իրավունք: Այդ իրավունքը նվաճում են զենքով: Եվրոպական քաղաքակիրթ ազգերը, որոնք մեզ թվում էին օրինապաշտ և արդար, խղճահարությունից բացի ոչինչ մեզ չտվեցին: Ռուսաստանը, որ թվում էր՝ մեր ժողովրդի մեծ բարեկամն է, իր շահերից բացի ոչինչ չէր տեսնում և չէր լսում: Հայ ժողովուրդը, կարծես, ձմռան

սառնամանիքին դրսում հայտնված անոթի երեխա լիներ, որի առջև բոլորը փակեցին իրենց տան դռները: Հայ ժողովուրդը անտեր էր: Բայց ամենից կարևորը, որ ես հասկացա, այն էր, որ որ մենք տերեր չպետք է փնտրենք դրսում»:

Հարցեր՝

1. Ո՞վ է հեղինակը:
2. Ի՞նչ իրադարձության մասին է խոսվում սկզբնաղբյուրում:
3. Ե՞րբ է տեղի ունեցել սկզբնաղբյուրում հիշատակվող իրադարձությունը:
4. Ո՞րն է եղել հեղինակի առնչությունը սկզբնաղբյուրում նկարագրվող իրադարձության հետ:
5. Վերնագրեք սկզբնաղբյուրի հետևյալ հատվածը:
6. Ի՞նչ անուն է բաց թողնված սկզբնաղբյուրում:
7. Ի՞նչ ն է կարևորվում սկզբնաղբյուրում:
8. Ինչպիսի՞ն է հեղինակի վերաբերմունքը իր կողմից նկարագրված իրադարձությունների նկատմամբ:
9. Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը հեղինակի և սկզբնաղբյուրի նկատմամբ: Ի՞նչ եզրակացություններ կարող եք անել:

   Առաջին չորս հարցերը գնահատվում են 0.5 միավոր, 5-րդ և 6-րդ հարցերը 1 միավոր, 7-րդ և 8-րդ հարցերը՝ 1.5 միավոր, իսկ 9-րդ հարցը 3 միավոր:

Սա մի այլ տիպի հետաքրքրություն առաջացրեց սովորողների մոտ, ովքեր շատ մեծ ոգևորությամբ կատարեցին այս հետազոտությունը: Սա շատ մոտիվացնող էր և մտածողության ու ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հիանալի միջոց: Այստեղ անդրադարձ կար և արտաքին քաղաքականության ձախողման, և անտարբեր վերաբերմունքի, և հուսահատության, և շահամոլության, և հույսը սեփական ուժերի վրա դնելու գաղափարի հասունության:

Մյուս շատ արդյունավետ ռազմավարությունը *Քարտեզային քննարկումն* է, որը հրաշալի միջոց է պատմության աշխարհագրական ընկալում ձևավորելու համար:

6-րդ դասարանում ընտրեցինք Վանի համահայկական թագավորության ժամանակահատվածը, որը պետք է վերածեինք քարտեզի: Վանի թագավորության տարբեր արքաների ժամանակվա քարտեզները համադրեցինք մեկում, որպեսզի տարբեր ժամանակահատվածների փոփոխությունը ևս տեսանելի լիներ: Աշխատանքը կատարեցինք ուրվագծային քարտեզի վրա: Նմանատիպ աշխատանք ենք կատարել նաև 10-րդ դասարանում՝ «Տիգրան 2-րդը և

նվաճումները» թեման անցնելիս: Քարտեզային աշխատանքը, կարծես, համ ու հոտ է տալիս տեսական գիտելիքներին: Դրա շնորհիվ նյութը և ամրապնդվում է սովորողների մոտ և զարգացնում է նրանց աշխարհագրական ընկալումը:

Ներկայումս շատ հազվադեպ են սովորողները դասի ընթացքում տալիս հարցեր, որոնք իրենց մոտ առաջացել են նյութը սովորելիս: Ի վերջո, հարցեր տալը ևս ակտիվ մտածողական գործընթաց է. հարցեր իրադարձությունների պատճառների, ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների, պատմական դերակատարների ու զարգացումների կարևորության մասին: Այս հարցերի պատասխանները հասկանալու համար մեզ օգնության են գալիս պատմության վկաները. դրանք են լուսանկարներ, արխիվային թերթեր, նամակներ, հնագիտական տարբեր նյութեր և այլն:

Լուսանկարների պատմությունը իմանալը ակտիվ մտածողական աշխատանք է, որտեղ կարող է դրսևորվել նաև սովորողների ինքնուրույն գործելակերպը: Օրինակ, ես նկատել եմ, որ սովորողները շատ քիչ են ուշադրություն դարձնում դասի մեջ ներառված լուսանկարներին: Երբ որ սկսում եմ հարցեր տալ այդ լուսանկարների վերաբերյալ, նոր սկսում է դա հետաքրքրել իրենց և սկսում են ուսումնասիրել մանրակրկիտ: Ուստի մեկ դասաժամ տրամադրել եմ մի լուսանկարի պատմության լուսաբանմանը 9-րդ դասարանում համաշխարհային պատմության դասաժամին «Մշակույթ» թեման ուսումնասիրելիս: Այդ լուսանկարն էր Արշիլ Գորկու «Նկարիչը և մայրը»:

Տրամադրեցի լուսանկարը սովորողներին, ովքեր պետք է ամեն տեղեկատվություն հավաքեին այս լուսանկարի վերաբերյալ: Աշխատանքը հանձնարարեցի կատարել զույգերով: Այս հանձնարարությունը և մոտիվացրեց սովորողներին, և առաջացրեց հետաքրքրություն պրպտելու, ավելին բացահայտելու ցանկություն: Սա պատմական ակտիվ մտածողություն և ինքնուրույնություն ձևավորելու հրաշալի միջոց է: Նրանց տրամադրեցի աղյուսակ, որը պետք է նրանք լրացնեին նկարի վերաբերյալ ինֆորմացիան հավաքելուց հետո: Ահա աղյուսակը՝

Ո՞վ է կտավի հեղինակը	Ու՞մ է պատկերել նկարիչը կտավում	Ի՞նչ է ցանկացել ցույց տալ նկարիչը այս նկարով	Ի՞նչ արժեքներ են ընդգրկված այս կտավում	Ի՞նչ հույզեր է արտահայտել նկարիչը այս կտավի միջոցով	Այլ տեղեկատվություն …

Այս աշխատանքը ինքնստինքյան տանում է դեպի ցեղասպանություն թեմայի ուսումնասիրության, հետաքրքրություն առաջացնում կերպարվեստի հանդեպ, ձևավորում արժեհամակարգ, նոր ձեռք բերած գիտելիքը համադրվում է նախկին գիտելիքների հետ, այնուհետև գիտելիքն անցնում է ակտիվ մտածողության փուլ՝ կատարվում է գիտելիքի խորացում և վերլուծություն, որին հաջորդում է դատողությունների անելու աստիճանը:
Հաջորդ հետաքրքիր աշխատանքը կատարվել է 10-րդ դասարանում, երբ սովորողները ստացան հանձնարարություն՝ ուսումնասիրելու հայոց հին մայրաքաղաքները: Դասարանում սովորողների թիվը 12-ն էր, ուստի ամեն մեկին հանձնարարվեց մի մայրաքաղաքի ուսումնասիրություն: Այդ աշխատանքը պետք է կատարեին մեկ շաբաթում: Արդյունքում ունեցանք շատ հետաքրքիր պատկեր: Սովորողները «որոնողական» աշխատանք կատարելու արդյունքում բերել էին ամենաօգտակար տեղեկատվությունը, ամենահետաքրքիրը, ամենաստույգը: Նրանք մանրամասն ուսումնասիրել էին՝

- յուրաքանչյուր մայրաքաղաքի տեղը ներկայումս(ՀՀ տարածքում կամ տարածքից դուրս)
- յուրաքանչյուր մայրաքաղաքի վիճակը(ավերված, կիսավեր, վերականգնված, գյուղերի վերածված)
- ամեն մի մայրաքաղաքի նշանավոր ճարտարապետական կառույցները

- մայրաքաղաքներում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները(թագադրումներ, ճակատամարտեր):
- մայրաքաղաքներից գտնված հնագիտական նյութերը(արձանիկներ, դրամներ, կահկարասի, զարդեղեն և այլն)

Այս շատ հետաքրքիր աշխատանքը ամբողջական տեսք ստացավ «Բարև Էրգիր» հաղորդաշարը դիտելով:

Վերը նշված բոլոր ռազմավարությունները հիանալի միջոց են ակտիվ մտածողություն և ինքնուրույնություն ձևավորելու համար: Այն չափազանց անհրաժեշտ է նաև հասարակագիտության ոլորտում, որտեղ ևս շատ կարևոր է, օրինակ, լուսանկարներով աշխատանքը, սկզբնաղբյուրների օգտագործումը. դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք՝ այդ ձևով տալով նախագիտելիք: Օրինակ՝ *Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է..* ***Երվանդ Քոչար.***

*Մենք կարծում եք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա...****Դեյվիդ Հյում***

Կամ մեկ այլ օրինակ՝ «Իրավունք» թեման 11-րդ դասարանում ուսումնասիրելիս կարելի է սովորողներին հանձնարարել հետազոտական աշխատանք. ուսումնասիրել անհատների և նրանց անցած պայքարի ուղին հանուն իրավունքների: Կարող են վերցնել տարբեր երկրների օրինակը(օր՝ Չարտիստական շարժումը Անգլիայում, ընտրական իրավունք ձեռք բերելու համար ժողովրդի պայքարը Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում և այլն):Այս թեման և՛ հետաքրքիր է, և՛ մոտիվացնող, և՛ կարող է ուժ տալ սովորողներին սեփական պայքարը առաջ մղելու համար: Կամ ենթադրենք «Տնտեսություն» թեման անցնելիս կարելի է առաջարկել «Սեփական բիզնեսի ստեղծում» ենթաթեման և տալ երկու շաբաթ ժամանակ, որպեսզի սովորողը հետազոտական աշխատանք անցկացնի՝ առաջադրելով նորարարական բիզնես գաղափարներ, սեփական բիզնես գաղափար և հեռանկար:

Բոլոր վերը թվարկածս մեթոդները շատ արդյունավետ են և կիրառելի, որոնք ապահովում են սովորողների ակտիվությունը, ովքեր իրենք են լինում պրպտողի դերում և որն էլ նպաստում է գիտելիքի ավելի լավ յուրացմանը:

Եզրակացություն

Այսպիսով, եթե իսկապես ուզում ենք սովորողների մտածողությունը զարգացնել, ապա պետք է ուսումնառության այնպիսի փորձառություններ ստեղծենք, որ սովորողները սկսեն մտածել. մտածել խնդրի շուրջ, վերլուծել խնդիրը, համեմատել տարբեր աղբյուրներից վերցված տեղեկատվություն և ընտրել առավել ստույգը: Այսինքն, չբավարարվել միայն լսածով, այլ փնտրել և ունենալ սեփականը: Սա կօգնի նրանց խորացնել ուսումնասիրվող նյութի և այն ուսումնասիրելու համար կիրառվող գործիքների ընկալումը: Սովորողների պատմական մտածողությունը կզարգանա, եթե նրանց հանձնարարենք մտածել պատմության մասին: Անհրաժեշտ է, որպեսզի սովորողների մոտ ձևավորվեն նախաձեռնողականություն ցուցաբերելու և ստեղծագործական ունակություններ դրսևորելու հմտություններ:

Դասի ժամանակ անհրաժեշտ է կիրառել հետազոտական տարբեր մեթոդներ, քանի որ դրանք թույլ են տալիս նյութը յուրացնել մատչելի, հետաքրքիր, վառ և պատկերավոր ձևով, նպաստում են գիտելիքների ավելի խորը յուրացմանը, հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների ձեռք բերման հանդեպ, ձևավորում են հաղորդակցական, անձնական, սոցիալական, ինտելեկտուալ բանիմացություն: Ուսուցման կազմակերպումը պետք է իրականացնել հետազոտական՝ այսինքն սովորողները պետք է ինքնուրույն լուծեն խնդիրները, որի ճանապարհին նրանք ավելի լավ կսովորեն և ձեռք կբերեն հմտություններ, գիտելիքներ և կարողություններ: Աշակերտները ունեն գիտելիքի որոշ մաս և այն ավելացնելու ու խորացնելու համար պիտի պրպտեն ու փնտրեն գիտելիքի աղբյուրը, իսկ ուսուցիչը պիտի ուղղորդող լինի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Seixas. P., $ Morton T. (2013)- The Big Six Historical Thinking Concepts. Nelson Education Ltd. Toronto.
2. Davies.I(Ed.). 2017. Debates in History Teaching (2 nd ed.). Routledge. London.
3. Л.Ю.Сафонова- «МЕТОДЫ ИНТЕРАКТИВНОГО ОБУЧЕНИЯ», МЕТОДИЧЕСКИЕ УКАЗАНИЯ. Великие Луки 2015
4. Подласый И.П. Педагогика. Новый курс: учебник для студ.пед.вузов. — М.: ВЛАДОС, 1999. — Кр. 1: Общие основы. Процесс обучения. — 576 с.: ил.
5. Селевко Г.К. Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления УВП. М.: НИИ школьных технологий, 2005.
6. «Գիրք Պատմության ուսուցման »,Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան, 2020
7. Ս. Խաչատրյան «ՈՒսուցման արդյունավետ հնարներ»,Երևան, 2020